ԱՐՄԱՎԻՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Առաջին պեղումների 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. թեկնածու Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

1980 թ. լրանում է Արմավիրում կատարված առաջին փորձնական պեղումների հարյուր տարին։

Աշխատանքները սկսեց հայագետ-կովկասագետ Ալեքսանդր Երիցյանը 1880 թ. մայիսին և ապա (նույն թվականի աշնանը) շարունակեց հնագետ Ա. Ս. Ուվարովը։ Արմավիրի հնագիտական ուսումնասիրման անհրաժեշտության հարցը հայագետ Մկրտիչ Էմինի առաջարկով մտցված էր համառուսաստանյան հնագիտական հինգերորդ համագումարի (Թիֆլիս, 1881) նախապատրաստական կոմիտեի աշխատանքային ծրագրերի մեջ[1]։

Դեռևս XIX դարի սկզբից Արմավիրը իր վրա էր բևեռել ուսումնասիրողների և ճանապարհորդների ուշադրությունը։ 1831 թ. ֆրանսիացի արևելագետ-հայագետ Սեն-Մարտենը, որը ցանկություն էր հայտնել տեղափոխվել Ռուսաստան աշխատելու նպատակով, հղացել էր Արմավիրը պեղելու անհրաժեշտության գաղափարը։ Ճանապարհորդների և ուսումնասիրողների մեծամասնությունը, հետևելով Մովսես Խորենացու նկարագրությանը, Արմավիրը նույնացնում էր Արաքսից ոչ շատ հեռու, Արարատյան դաշտի արևմտյան մասում բարձրացող միայնակ ժայռոտ բլրի և նրա շրջապատի հետ։

Հատկապես ուշադրության արժանի են Դյուբուա դե Մոնպերյոյի և Հովհաննես Շահխաթունյանի՝ Արմավիրին նվիրած էջերը, որոնք արտացոլում են հուշարձանի XIX դարի 30—40-ական թթ. պահպանվածության վիճակի բավական ճշմարտացի պատկերը։

Քաղաքից, նրա շինություններից շատ քիչ բան էր մնացել, իսկ բլրի վրա, միջնաբերդում, դեռևս երևում էին հին պարիսպների ու աշտարակային շինության հետքերը։ Հուշարձանը շատ էր տուժել, ծառայելով փաստորեն որպես քարհանք։ Այստեղից էր քարեր տարել Երևանի Հուսեին-Ղուլի խանը՝ Սարդարապատի կառուցվող ամրոցի պետքերի համար (տարվել էր նաև Արմավիրին նախորդած ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի հիմնադրման մասին պատմող Արգիշտի I-ի սեպագիր արձանագրությունը)։ Այստեղից էին քարեր տեղափոխել նաև Պարսկաստանից ու Թուրքիայից եկած հայ վերաբնակիչներն իրենց գերեզմանատան համար, որը հիմնադրվել էր բլրի ստորոտում, նրա հյուսիսային մասում։

Երբ Երիցյանն ու Ուվարովը եկան Արմավիր, քիչ բան չէր հայտնի հուշարձանի մասին։ Հանրահայտ էին Մովսես Խորենացու հաղորդած տեղե-

---

[1] А. С. Уваров, Исследование местности, на которой предполагались развалины Армавира, «Протоколы подготовительного комитета V археологического съезда в Тифлисе»; М., 1882, էջ 439—449։

կությունները Արմավիր մայրաքաղաքի, նրա հիմնադրման հանգամանքների ու պատմության, ինչպես և արեգակի, լուսնի ու թագավորական նախնիների պաշտամունքին նվիրված տաճարի և զուշակությունների համար նախատեսված սոսինների պուրակի մասին։ Այդ տեղեկություններն էին դրդել Մ. Էմինին՝ առաջարկել պեղումներ ձեռնարկելիս նախապատվությունը տալ իր հնությամբ Անիին գերազանցող Արմավիրին։ Բացի այդ, 1862 թ. սկսած Արմավիրում և նրա շրջապատում գտնվեցին ուրարտական սեպագիր արձանագրություններ, որոնք առաջին անգամ հրատարակվեցին 1869 թ. «Արարատ» ամսաթերթի էջերում Մեսրոպ Սմբատյանի նախաձեռնությամբ, իսկ դրանք լրացուցիչ տվյալներ էին հաղորդում հուշարձանի հնության վերաբերյալ։

Պեղումները, որոնց հետախուզական բնույթն անկասկած է, կատարվեցին փորձնական խրամատների ձևով՝ բլրի վրա, նրա ստորոտներում և, ինչպես երևում է Ա. Երիցյանի կազմած քարտեզից, հարթավայրում, բավական մեծ հեռավորության վրա։ Բլրի գագաթային մասում նշմարելի էին հարավից հյուսիս ձգվող մի պատի հետքեր. այս պատը, հավանաբար, նույնանում է արևելյան լանջին տեղադրված երկու մեծ շենքերի արևմտյան պատերի հետ։ Բլրի գագաթին հիշատակվում է քառանկյունի մի աշտարակ, որի մասին գրում է նաև Հովհաննես Շահխաթունյանը։ Այն, նույնպես թեական ձևով, կարելի է նույնացնել այժմ գագաթում պեղվող կառույցի հետ, որը իր հիմքում ուրարտական լինելով՝ վերակառուցվել է անտիկ ու միջնադարյան ժամանակաշրջաններում։ Վերջապես, երևում էին նաև ամրոցի արևմտյան և հյուսիսային պարիսպների հետքերը, իրենց աշտարակներով հանդերձ, որոնք, ինչպես պարզվեց մեր օրերում կատարված պեղումների ժամանակ, ավելի լավ էին պահպանվել պարիսպների մյուս՝ հարավային և արևելյան հատվածների համեմատությամբ։ Պարիսպը, գրում էր Ուվարովը, շարված էր լավ մշակված, երեսի մասում եղրերը հանված (ռուստովկա) բազալտե վեմերով։ Նման քարեր իսկապես որ պահպանվել են ամրոցի հյուսիսային պարսպում։ Վեմերի վրա մետաղե կապերին ծառայող փոսերի առկայության մասին դիտողությունը չի կարող ուրարտական պարսպին վերաբերել, քանի որ ուրարտական շինարարական արվեստին ծանոթ չէին նման կապեր։ Խոսքը հավանաբար գագաթի աշտարակաձև կառույցի ավելի ուշ ժամանակաշրջանի քարերի մասին է, որոնց վրա պահպանվել են այսպես կոչված ծիծեռնակի պոչի նման փոսերը։ Երիցյանը և Ուվարովը ճիշտ են նկատել, որ պարիսպների քարը՝ բազալտը, բերված է ս. Դավթի բլրից։

Պեղումները կատարվել են բլրի երեք կետերում, որոնցից երկուսի տեղը հնարավոր է այս կամ այն ձևով պարզել։

Ա. խրամատը պեղվել է բլրի գագաթին։ Այստեղ աշտարակաձև շենքից և 1869 թ. կառուցված մատուռից հյուսիս-արևելք բացվեց բավականին լայն պատի հիմքը (այժմ կարելի է ենթադրել՝ ուրարտական ժամանակաշրջանի), գտնվեցին միջնադարյան նյութեր, կրաքարե սալ՝ վրան խաչի բանդակ, օջախներ, խեցեղեն։

Բ. խրամատը, գտնվելով Երիցյանի քարտեզից, գտնվում էր հարավային մասում։ Քանի որ քարտեզի վրա հուշարձանը այնքան էլ ճիշտ տեղադրված չէ աշխարհագրական կողմերի նկատմամբ, ուստի այն կարող էր

արևմտյան մասում գտնվել։ Հայտնաբերված նյութը (թոնիրներ, սափորներ, կարաս, արաբական, ավելի ճիշտ կլինի ասել՝ սելջուկյան դրամ) միջնադարյան է։

Բ. խրամատը պեղվել է բլրի արևմտյան ծայրում, որտեղ ժայռը անշան խորության վրա էր։

Հարթավայրում փորձնական պեղումներ կատարվել են բլրին արևմուտքից, հարավից և արևելքից հարող դաշտերում։ Հարավում փորձնական պեղումները հանդիպել են մանրախճի և ավազի շերտի, որը տկնարկում է բլրի տակով անցնող Արաքսի հին հունի գոյության մասին։ Արևմուտքում, որտեղ պետք է փնտրել քաղաքի բուն տարածքը և որը այսօր ծածկված է խաղողի այգիներով, պեղվել են ցածրադիր բարձունքներ, որոնք համահարթվել են հետագայում հողագործական աշխատանքների ժամանակ։ Այստեղ երևան են եկել քառանկյունի կացարանների հիմքեր $1^1/_2$ արշին լայնությամբ։ Կացարաններում գտնված նյութերը, ըստ Ուվարովի, ուշ ժամանակաշրջանի են, բացառությամբ, հավանաբար, կրաքարե խարսխի ու խոյակի։ Նման հիմնապատեր անտիկ դարաշրջանի խեցեղենի ուղեկցությամբ, բացվել են այստեղ 1968—1969 թթ. կատարված հետախուզական պեղումների ընթացքում։ Բլրից դեպի արևելք, ամենայն հավանականությամբ Արճարխ (Արևիկ) գյուղի տարածքում, պեղողները հանդիպեցին նյութերի, որոնք, ինչպես հետագայում պարզվեց, վաղբրոնզեդարյան ժամանակի են։

Երիցյանը և Ուվարովը դամբարաններ են պեղել նաև բլրի հյուսիսային, արևելյան և հարավային ստորոտներում։ Նրանց մի մասը եղել է հիմնահողային, կմախքը ձախ կողքի վրա պառկած. դամբարաններում գտնվել են բրոնզե օղերից կազմված զարդեր, հյուսածո ապարանջաններ, սալակե և սերդոլիկե ուլունքներ։ Այս դամբարանները համարվեցին ամրոցին ժամանակակից կամ ավելի հին։ Մյուսներն ունեն հրաբխային ծագման քարերով և կրաքարով շարված պատեր։ Այս խումբը ավելի հին համարվեց։ Ենջեցյալները աջ կողքի վրա էին պառկած, կծկված ոտքերով։ Դամբարանների մեջ հանդիպում են կճուճներ, օբսիդիանե միջուկներ և երկաթի իրեր։ Բլրի հարավում բացված դամբարանները շարված էին կոպիտ քարերով, նրանց մեջ իրեր չկային ու թվագրվեցին ավելի ուշ ժամանակաշրջանով։

Անցնելով հուշարձանի թվագրման հարցին, Ուվարովն այն համարեց մ. թ. IV դարի մի ինչ-որ ամրոց, փաստորեն ժխտելով, որ իր ուսումնասիրած հուշարձանը Արմավիրն է։ «Իսկական» Արմավիրը նա առաջարկեց փնտրել մի այլ տեղ։ Իր թվագրման համար նա հիմք ընդունեց Արմավիրի ամրոցի շինարարական արվեստի առանձնահատկությունները, որոնք, ըստ Ուվարովի, համեմատվում են Գառնի ամրոցի և տաճարի շինարարական տեխնիկային բնորոշ գծերի հետ։ Նախ պետք է ասել, որ Արմավիրում Ուվարովի տեսած պարիսպներն ու պատերը, որոնց շինարարական առանձնահատկությունները նա ընդունում է որպես ամրոցի թվագրման հիմք, գերազանցապես ուրարտական ժամանակաշրջանին են վերաբերում։ Այդ պարզ էր արդեն այն ժամանակ, և այդ մասին բավական որոշակիորեն արտահայտվեց արևելագետ Մ. Վ. Նիկոլսկին՝ բերելով ծանրակշիռ ապացույցներ

Այս հանգամանքը արդեն բավական էր Ուվարովի առաջարկած թվագրումը հերքելու համար, էլ չենք խոսում այն մասին, որ Գառնիի թվագրումը մ. թ. IV դարով նույնպես սխալ է։

Այսպիսով, պեղողները «փաստորեն անցան այն նյութերի կողքով, որոնք նրանք փնտրում էին»[2]։ Ուվարովի և Երիցյանի պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութերը փոխադրվեցին Թիֆլիսի կովկասագիտական թանգարան ու արդեն մեր օրերում մշակվեցին հնագետ Բ. Կուֆտինի կողմից[3]։

Կուֆտինը առանձնացրեց ու մասամբ հրապարակեց վաղբրոնզեդարյան, երկաթի դարի, ուրարտական նյութերը և հետագայում հելլենիստական ճանաչված խեցեղենը, որը նա միացրեց Դիրաքլարից, Մալաքլուից ու Քյուլթափայից հայտնի գունազարդ խեցեղենի նմուշներին և համարեց մի ինքնուրույն խումբ։ Կուֆտինը սահմանագատեց նաև դամբարանային նյութերը, առանձնացնելով սասանյան և հելլենիստական դարաշրջանի իրերը։

1890-ական թթ. սկզբին Ն. Մառը սկսում է իր հնագիտական գործունեությունը Հայաստանում՝ ձեռնարկելով Անիի պեղումները։ Սակայն չսահմանափակվելով Անիով, Մառը ուսումնասիրում է Հայաստանը լայն ընդգրկումով՝ նրա հնագույն (վիշապներ) ու անտիկ (Գառնի) շրջանները, միջնադարյան մյուս հուշարձանները և փոքր ծավալի հետախուզական բնույթի պեղումներ է կատարում Արմավիրում։ 1892 թ. նա բնակիչներից ձեռք է բերում ուրարտական քարե երկու կնիք՝ մեկը կոնաձև, մյուսը գլանաձև։

1893 թ. Հայաստան են գալիս սեպագրագետ Մ. Վ. Նիկոլսկին և հնագետ Ա. Ա. Իվանովսկին, որոնց համագործակցությունը բեղմնավոր եղավ հնագիտության համար[5]։ Արմավիրի մասին արվեցին հետաքրքրական դիտողություններ՝ կապված նրա շինարարական տեխնիկայի հետ, բայց եղան նաև վիճելի եզրակացություններ ուրարտական Արմավիրի, այսպես կոչված, նախավանյան ժամանակաշրջանի մասին։

1908 թ. (1911) Արմավիրի բլրի հարավային ստորոտում գտնվեց հունարեն երեք արձանագրություններով մի ժայռաբեկոր։ Նրանց առաջին ուսումնասիրողը եղավ Անիի արշավախմբի մասնակից Յա. Ի. Սմիռնովը, որի գրառումները հրատարակվեցին արդեն մեր ժամանակներում Կ. Վ. Տրեվերի կողմից[6]։ Սմիռնովը բացահայտեց արձանագրությունների կապը հունական գրականության նմուշների հետ (Հեսիոդոս, Եվրիպիդես) և ցույց

---

[2] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 6։

[3] Б. А. Куфтин, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, Тбилиси, 1944, էջ 17, 21—23, 59—60, 92—96։

[4] «Отчеты археологической комиссии за 1892 г.», էջ 84։

[5] М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, «Материалы по археологии Кавказа», вып. V, М., 1896; А. А. Ивановский, По Закавказью, «Материалы по археологии Кавказа», вып. VI, М., 1911.

[6] К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 148—156։

տվեց նրանց նշանակությունը հայկական հելլենիստական մշակույթի համար։

1927 թ. կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի (Թբիլիսի) և Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի աշխատանքների համատեղ ծրագրի մեջ մտցված էր Արմավիրի հնագիտական հետազոտումը։ Սակայն միացյալ արշավախումբը, Ս. Վ. Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ, պեղումներ չկատարեց, այլ սահմանափակվեց վերգետնյա հուշարձանների նկարագրությամբ և ընդհանուր տեղագրական քարտեզի կազմությամբ[7]։ Ուսումնասիրվեցին բլրի լանջերի քարայրները (որոնցից մեկի մեջ գտնվեցին սեպագիր արձանագրության բեկորներ), ժայռափոր կառույցները բլրի արևելյան մասում, բլրի հարավային ստորոտի խոյաձև ժայռաբեկորը՝ վրան վորագրված բազմաթիվ նշաններով, պաշտամունքային նշանակության թասաձև փոսիկներով, ինչ-որ հատակագծի հետքերով և այլն, ուսումնասիրվեց Դտվթի բլուրն ու նրա շրջակայքը և հիմնավորվեց նրա հեռանկարային նշանակությունը։ Սակայն ամենակարևոր գյուտը պետք է համարել հունարեն չորս արձանագրություններով երկրորդ ժայռաբեկորը, որը հայտնաբերվեց առաջինի հարևանությամբ։

Արմավիրի հունարեն արձանագրությունների նշանակությունը շատ մեծ է ոչ միայն Արմավիրի, այլև Հայաստանի պատմության համար։ Դրանք հաստատեցին Արմավիրի տեղադրությունը և կապը Երվանդունիների հետ, նոր լույս սփռեցին քաղաքի սոցիալական կազմի վրա։ Արձանագրություններից մեկում վկայված է հելլենիստական աշխարհի սոցիալ-տնտեսական իրականությանը բնորոշ քաղաքային համայնքի առկայությունը հին Արմավիրում։ Տարվա ասորա-մակեդոնական ամիսների ցուցակը մի այլ արձանագրությունում ապացույց է նոր՝ հելլենիստական տոմարի մուտքի ու նրա կիրառման մասին։ Երկու այլ արձանագրություններ, կապված լինելով մ. թ. ա. III դարի վերջի քաղաքական դեպքերի հետ, որոնք հանգեցրին Երվանդունիների բարձմանը, որոշակի ակնարկ են պարունակում մայրաքաղաքը Երվանդաշատ փոխադրելու մասին։ Քառաձի կառքի նվիրատվությունը հաստատում է Խորենացու տեղեկությունները Արմավիրում Արեգ-Ապոլլոնի տաճարի գոյության մասին, իսկ հույն հայտնի գրողների (Հեսիոդոս, Եվրիպիդես) երկերից բերված քաղվածքները՝ հունական գրականության ու մշակույթին արքունիքի ու քաղաքացիների վերնախավի հաղորդակից լինելու մասին։

Արձանագրությունները կարևոր աղբյուր են Երվանդունիների դիվանատան աշխատանքի, ինչպես նաև հայկական արքունիքում հունականության ներթափանցման աստիճանի վերաբերյալ։

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո աստիճանաբար, իսկ III դարում արդեն սրընթաց ձևով հունարենը իրեն ուղի հարթեց Արևելքում։ Եթե Աքեմենյանների օրոք և դրանից միառժամանակ հետո արամեերենն էր պետական պաշտոնական լեզվի դեր խաղում Հայկական սատրապության կառավարիչների ու Երվանդունի առաջին թագավորների դիվանատանը,

---

[7] С. В. Тер-Аветисян, Археологическое обследование городища и крепости «Древний Армавир», «Научный сборник посвященный 20-летию установления советской власти в Армении», Ереван, 1941, էջ 51—64։

ապա III դարի ընթացքում՝ նրա երկրորդ կեսում, ինչպես երևում է Ծոփքի դրամների հունարեն մակագրություններից ու Արմավիրի արձանագրություններից, նա իր տեղը զիջում է հունարենին։ Հունարենը դառնում է Երվանդունիների դիվանատան պետական պաշտոնական լեզուն։ Միթրասի նամակը Երվանդին հելլենիստական պետություններում ընդունված պաշտոնական փաստաթղթի ձևերից մեկն է, որի մեջ տվյալ դեպքում քաղաքը, նրա համայնքը իր հավատարմությունն է հավաստում թագավորին՝ պետության համար այս ծանր օրերին։

1935 թ. Ս. Տեր-Հակոբյանը հրապարակեց Արմավիրում պատահականորեն գտնված նյութեր՝ ոսկե չորս մեդալիոններ, գունազարդ անոթ, բազմանիստ կնիք[8], որոնք, ինչպես հետո պարզվեց, թվագրվում են հելլենիստական ժամանակաշրջանով։

Արմավիրի առաջին փորձնական պեղումների շնորհիվ կատարված ուսումնասիրության այս համառոտ ակնարկից երևում է, թե ինչ չափով էր հասունացել հուշարձանի հնագիտական սիստեմատիկ պեղումների անհրաժեշտությունը։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմում ծնունդ առած հնագիտության և ազգագրության ինստիտուտը գիտակազմակերպչական նախապրյալներ ստեղծեց նման ձեռնարկման համար։ Արմավիրի պեղումները, որոնք սկսվեցին 1962 թ. և շարունակվում են առ այսօր (պեղումների ղեկավարներ Բ. Ն. Առաքելյան՝ 1962—1969 թթ., Գ. Ա. Տիրացյան՝ 1970 թ. հետո), կոչված էին լրացնելու հին Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության մեջ գոյություն ունեցող մի մեծ բաց՝ կապված նախ և առաջ Հայաստանի հելլենիստական դարաշրջանի հետ։ Այդ բացը այժմ հաջող կերպով լրացվում է պեղումների ընթացքում[9]։

Արմավիրի հնագիտական հետազոտման հիմնական արդյունքները համառոտ ձևով հետևյալն են։ Պեղումների ընթացքում հնարավոր եղավ պարզել Արմավիրի բազմաշերտ բնույթը, նրա շերտագրական իրական պատկերը՝ ուրարտական (մ. թ. ա. VIII—VII դդ.) հինհայկական՝ հելլենիստական (մ. թ. ա. III—I դդ.) և միջնադարյան (X—XIII դդ.)։ Սկզբնական (վաղ երկաթի. մ. թ. ա. IX—VIII դդ.) և միջանկյալ (աքեմենյան՝ վաղհայկական, մ. թ. ա. VI—IV դդ.), մ. թ. առաջին դարերի, վաղմիջնադարյան (IV—IX դդ.) փուլերը ավելի նվազ են ներկայացված կամ բացակայում են։

Արմավիր բլուրի պեղումների հետ միաժամանակ սկսված և զուգահեռաբար տարվող ս. Դավթի բլուրի (Արմավիրից շուրջ 2 կմ արևմուտք) պեղումների շնորհիվ հնարավոր եղավ պարզել, որ խոսքը մի ամբողջական

---

8 Ս. Տեր-Հակոբյան, Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը, «Նյութեր հին Հայաստանի պատմության», հատ. 1, Երևան, 1935, էջ 149—150։

9 Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4։ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 2։ Նույնի՝ Հնագիտական աշխատանքները Արմավիրում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 5։ Նույնի՝ Արմավիրի պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 12։ Նույնի՝ Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3։ Գ. Ա. Տիրացյան, Ի. Ա. Կարապետյան, Արմավիրի 1977—1978 թթ. պեղումները, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4։

հուշարձանի՝ Արգիշտիխինիլի քաղաքի մասին է, որի երկու ամրոցները՝ արևելյանն ու արևմտյանը տեղադրված են եղել վերոհիշյալ երկու բարձունքների վրա, իսկ քաղաքային թաղամասերը՝ նրանց միջև ընկած տարածքում[10]։ Հնարավոր եղավ պարզել ուրարտական Արմավիրի զարգացման ժամանակագրական պատկերը, ամրոցի առանձին հատվածների ու շենքերի ֆունկցիոնալ նշանակությունը։

Արմավիրը Հայկական լեռնաշխարհի առայժմ այն հազվագյուտ հուշարձաններից է, որտեղ այդքան ակնառու է հինհայկական (հելլենիստական) և ուրարտական շերտերի փոխհարաբերությունը և որտեղ հինհայկական մշակույթը ակնհայտորեն զարգացել է ուրարտական միջավայրում։ Այս կապակցությամբ հնարավոր եղավ պարզել Արմավիրի և Հայաստանի հելլենիստական դարաշրջանի մշակույթի մի շարք առանձնահատկություններ՝ կապված տեղական և հելլենիստական տարրերի փոխազդեցությունների ու խաչաձևման պրոբլեմի հետ[11]։ Հնագիտորեն ապացուցվեց, որ մայրաքաղաքը մ. թ. ա. III դարի վերջին Երվանդաշատ տեղափոխվելուց հետո Արմավիրը շարունակեց պահպանել իր գոյությունն ու նշանակությունը, առնվազն մ. թ. ա. II—I դդ., մի հանգամանք, որն իր արտացոլումն է գտել հույն աշխարհագիր Պտղոմեոսի աշխատություններում։ Բացահայտվեցին միջնադարյան Արմավիրի առաջացման պատմական նախադրյալները։

Այժմ քննենք այս արդյունքները ըստ պատմա-մշակութային խոշոր ժամանակահատվածների։

Ուրարտական Արմավիրը մ. թ. ա. 776 թ. Արգիշտի I թագավորի հիմնադրած Արգիշտիխինիլի քաղաքի արևելյան միջնաբերդն է։ Քաղաքի պատմությունը, որն առաջներում հայտնի էր միայն գրավոր աղբյուրներից, առնում է ուսումնասիրողների աչքի առաջ, զգալի չափով հարստացած հնագիտական պեղումների տվյալներով, որոնք թույլ են տալիս ուրվագծել նաև արևելյան միջնաբերդի՝ ուրարտական Արմավիրի ճարտարապետական կերպարը։

Արմավիրի միջնաբերդի պարիսպը բացվել է ամբողջ պարագծով, բացառությամբ հարավային մի քանի հատվածների[12]։ Պեղումները պարզել են, որ միջնաբերդը ընդլայնվել է արևմտյան ուղղությամբ, պարիսպների երկրորդ շարքի կառուցման կապակցությամբ։ Այստեղ. ամրոցի հյուսիս-արևելյան մասում տեղադրված է եղել մուտքը. դեպի ուր տանում էր թեք հողաթումբը (պանդուս)։ Պարսպում հանդիպում են քարի մշակման տարբեր եղանակներ [կիկլոպյան շարվածքը հիշեցնող կոպիտ մշակված քարեր, եզրերը հանված քարեր (ռուստովկա), նման Թոփրախկալեում, Օշականում, Փորրավանում (Դովրի) եղածներին, լավ հարթեցված քարեր. վկայված նաև Հայկաբերդի (Զավուշթեփե) ու Դովրիի ամրոցների պա-

---

[10] А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974.

[11] Г. А. Тирацян, Армавир и античный мир, «Античность и античные традиции в культуре и искусстве народов Советского Востока», М., 1978.

[12] Б. Н. Аракелян, *սյվ. աշխ., էջ. 163*, К. К. Кафадарян, Архитектура города Аргиштихинили (автореферат кандидатской дисс.), Ереван, 1975; Г. А. Тирацян, Урартский Армавир, «Культура Востока. Древность и раннее средневековье», Л., 1978.

բիսպների շարվածքում)։ Այնտեղ, որտեղ պարիսպը հանդիպում է ժայռազանգվածներին, վերջիններս հարմարեցված են նրանու ժայռը մշակված է աստիճանաձև. աստիճանների վրա դրված են պարսպի քարե շարքերը։ Ժայռը մշակելու նման եղանակ հանդիպում է Վանում, Բաստամում, Արգիշտիխինիլիի արևմտյան ամրոցում։

Ուշադրության արժանի են ամրոցի ջրահեռացման սարքերը (վերգետնյա՝ տուֆե քարերից կազմված և ժայռափոր), որոնք պարսպի տակով դուրս են գալիս ամրոցից։

Ուրարտական Արմավիրի տարածքը, որպես կանոն, կառուցապատված է եղել առանձին կանգնած բազմաթիվ շենքերով, որոնց մեծ մասը ի հայտ է բերվել պեղումների ընթացքում։ Բացահայտված պատկերը թույլ է տալիս առաջ քաշելու միջնաբերդի թե՛ առանձին հատվածների և թե՛ առանձին ճարտարապետական համալիրների կամ նույնիսկ առանձին շենքերի նշանակության հարցը։ Հետևապես հնարավոր է խոսել պալատական տիպի բնակելի շենքերի, տաճարային կառույցի, նրան կից հատուկ համալիրի, զորանոցային տիպի սենյակների, պահեստների ու ամբարների, ինչպես նաև առանձին կացարանների մասին, որոնց մի մասը ամրոցից (հյուսիսային և արևմտյան պարսպից) դուրս է հանված։

Ավելի քան հավանական է, որ արևելյան լանջին բացված երկու իսոշոր, իրարից միջանցքով բաժանված շենքերը, մեկը հենված հյուսիսային պարսպին, մյուսը՝ հարավային, մեկը հինգ սենյականոց, մյուսը՝ երեք, ունեցել են պալատական բնույթ, որտեղ բնակելի սենյակները և խոշոր կարասներով օժտված տնտեսական նշանակության բաժանմունքները համատեղ գոյատևել են։

Իր դիրքով (բլրի ամենաբարձրադիր և տեսանելի կետում), ճարտարապետական առանձնահատկություններով, խոշոր քարաշեն հարթակի գոյությամբ և շինարարական արվեստի մանրամասնություններով (քարերը լավ մշակված, եզրերը հանված են) գագաթի շենքը պետք է որ ճանաչվեր տաճարային շենք, որի գոյությունը հավաստվում է նաև Արմավիրում գտնված ուրարտական և հունական արձանագրությունների տվյալներով ու Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններով։ Տաճարից դեպի արևմուտք բացվող մեծ համալիրը, միջանցքով և բազմաթիվ մեծ ու փոքր աղյուսաշեն սենյակներով, պատերը հարդարող որմնանկարներով, գորգերով կամ դեկորատիվ վահաններով, կապվում է նրա հետ և՛ իր դիրքով, և՛ իր բնույթով։

Ամրոցի արևմտյան հատվածի երկարավուն սենյակների տնտեսական բնույթը հաստատվում է ոչ միայն ուրարտական (Կարմիր բլուր) ու խեթական (Բողազքյոյ) զուգահեռներով, այլև ուրարտական արձանագրությունների տվյալներով, որոնք խոսում են Արմավիրում կառուցված հացահատիկի ամբարների մասին։ Արմավիրում դեռևս մ. թ. IV դարում նման կառույցների գոյության վերաբերյալ մի ակնարկ պահպանվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (II, Բ)։

Ամրոցի մուտքի մոտ, հյուսիսային պատի տակ, ներսից բացված միաչափ ու միատեսակ սենյակները պետք է ծառայեին Արգիշտիխինիլիի արևելյան ամրոցի պահակազորքին։

Հատակագծային իր լուծումներով ուսումնասիրողների ուշադրությունն է բևեռում սյունազարդ կառույցը (առնվազն 3 շարք 7-ական սյուներով) ամրոցի արևմուտքում, Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի կանգնեցրած պարիսպների արանքում՝ իրենց դարն ապրած երկարավուն պահեստային սենյակների տեղում։ Կառույցը մի նոր տպացույց է Ուրարտուում գոյություն ունեցող ճարտարապետական նման լուծումների օգտին, որոնց հանդիպում ենք Երզնկայի դաշտում կառուցված Ալթընթեփեի ուրարտական ամրոցում (3×6 սյուն) և նույն Արգիշտիխինիլիում՝ նրա արևմտյան ամրոցում (2×10 սյուն)։ Հնագույն սյունազարդ դահլիճը մեզ հայտնի է խեթական աշխարհից՝ Բողազքյոյից (Խաթուշաշ, 5×5 սյուն)։ Ուրարտուի միջնորդությամբ ճարտարապետական այս ձևը տարածվել է Մարաստանում և ապա Պարսկաստանում, որտեղ իր կատարյալ ծաղկմանն է հասել (Պերսեպոլիս)։

Միջնաբերդի ճարտարապետական մնացորդների վերլուծությունը թույլ է տալիս վերականգնել նրա ժամանակագրական զարգացման պատկերը։ Այստեղ կարելի է առանձնացնել շինարարական երեք կարևոր փուլ։ Առաջին փուլը կապված է Արգիշտի I-ի կողմից միջնաբերդի հիմնադրման հետ։ Շինարարական երկրորդ փուլը համընկնում է Սարդուրի II-ի թագավորության տարիներին։ Նրա օրոք ամրոցը ընդլայնվել է արևմտյան ուղղությամբ։ Այստեղ կառուցվել են պահեստային սենյակներ, իսկ ազատ մնացած տարածքում դրվել է առանձին շենք։ Պեղումները բացահայտեցին նաև շինարարական երրորդ փուլի մնացորդները, կապված Ուրարտուի վերջին թագավորներից մեկի՝ Ռուսա III-ի անվան հետ։ Դրանք են. արևմտյան լանջի երկարավուն սենյակների մոտ բացված աղյուսե պատը՝ Կարմիր բլուրի իրավիճակը հիշեցնող հրդեհի հետքերով և ամրոցի արևմտյան մասում բացված՝ վերը հիշատակված սյունազարդ դահլիճը։

Ուրարտական Արմավիրի պեղումների ժամանակ գտնվել են ճարտարապետական հետաքրքիր մանրամասներ։ Խոսքը, նախ և առաջ, գերազանցորեն մշակված բազալտե վեմերի [հավանաբար նրանք պատկանում են անկյունավոր ելուստներով աշտարակաձև կառույցներին, նման Կարմիր բլուրում և Ադլջևազում (Քեֆկալեսի) գտնվածներին], ապա՝ բազալտե դեկորատիվ պատուհանի մեծ բեկորի մասին է։ Նման խուլ պատուհանները մինչև օրս հայտնի էին միայն աքեմենյան ճարտարապետության հուշարձաններից (Նակշ-ի Ռուստեմի և Զինդան-ի Սուլեյմանի աշտարակաձև կառույցները)։ Ուրարտական ճարտարապետության մեջ նման պատուհանների գոյության մասին կարելի էր կռահել ամրոցներ պատկերող բարձրաքանդակներից (տե՛ս հատկապես Քեֆկալեսի բարձրաքանդակը)։ Ժամանակին դեկորատիվ խուլ պատուհան է գտնվել Թոփրախկալեում՝ Խալդի աստծու տաճարի ավերակներում, բայց այն մնաց չիմաստավորված ինչպես տաճարը պեղող (1880) Օ. Ռասամի, այնպես էլ պեղումների նյութերը հրատարակող (1954) Ռ. Բարնետի համար։

Շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում մերձտաճարային շենքում գտնված ուրարտական որմնանկարների բեկորները, որոնք վկայում են, որ մոնումենտալ արվեստի այս ճյուղն իր արտահայտությունն է ունեցել Արմավիրում։ Բեկորների մեջ հանդիպում են մարդկային (քրմերի) պատկերներ, կենդանական, երկրաչափական, բուսական մոտիվներ՝ նկարված կարմիր, կապույտ, սև, սպիտակ գույներով։ Արմավիրի որմնանկարները ի

հայտ են բերում Արին բերդին, Ալթընթեփեին, Բաղնոցին և ուրարտական որմնանկարչության մյուս կենտրոններին բնորոշ ոճական գծեր։

Ուրարտական Արմավիրին հատուկ են մ. թ. ա. VIII դարում՝ Ուրարտուի գոյության առաջին շրջանում հիմնադրված քաղաքների առանձնահատկությունները։ Տուշպայի, Էրեբունիի նմանությամբ Արգիշտիխինիլին սկզբում դառնում է տերության վարչատնտեսական կարևորագույն կենտրոններից մեկը, ավելի ուշ՝ մ. թ. ա. VII դարում իր տեղն ու դերը զիջելով նոր քաղաքներին՝ Թելշեբաինիին, Թուշրախկալեին և մյուսներին։ Հնագիտական նյութը դժվար է տարբերակման ենթարկել, թեպետ տեղ-տեղ հաջողվում է վաղուրարտական՝ մ. թ. ա. VIII դարի նյութերը սահմանազատել ուշուրարտական նյութերից։ Վերջիններիս առկայությունը և Ռուսա III-ի՝ Արմավիրում գտնված արձանագրությունը վկայում են, որ ինչպես ուրարտական այլ վաղ կենտրոններում, այնպես էլ այստեղ կյանքը աշխուժացել է մ. թ. ա. VII դարի վերջին։

Արգիշտիխինիլիին վիճակվեց ուրարտական մյուս քաղաքների ճակատագիրը։ Նա գրոհով վերցվեց և հրկիզվեց։ Արմավիրում հրդեհի հետքերը տեղ-տեղ լավ երևում են։ Արմավիրի պեղումները նույնպես թույլ են տալիս առաջ քաշել ուրարտա-սկյութական կապերի հարցը և ընդունելի համարել ամրոցի գրոհին սկյութացիների մասնակցած լինելու վարկածը, որը հիմնված է նաև իրեղեն ապացույցների վրա (սկյութական տիպի ձիու սանձեր, նետասլաքներ և այլն)։ Միևնույն ժամանակ, ուրարտական եղջյուրն հոյակապ կնիքը՝ կենաց ծառի երկու կողմում դեմ-դիմաց կանգնած, ծառս եղած քարայծների պատկերներով ու բազմաթիվ այլ մոտիվներով իր ուղղակի զուգահեռներն ունի սկյութական վերնախավի առարկաներում ու ավելի որոշակի է դարձնում Ուրարտուի ազդեցության ոլորտները սկյութական արվեստի վրա։

Ուրարտուի անկմանը հաջորդող ժամանակաշրջանը Արմավիրում՝ ավելի քան համեստ է ներկայացված։ Հայտնի է, որ Աքեմենյանների օրոք Արարատյան դաշտում իր դերն է պահպանում Էրեբունին, որպես 18-րդ սատրապության կենտրոն։ Էրեբունիի աքեմենյան, վաղհայկական ճարտարապետության և անգամ հնագիտական նյութի համեմատությամբ Արմավիրը դժգույն տեսք ունի։ Այստեղ գտնված ոսկե մահիկաձև կրծքազարդը, խնցկենը, մետաղե իրերը, որոնք կապվում են մ. թ. ա. V—IV դդ. մշակույթի հետ[13], վերջին հաշվով կարող են վերաբերել մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսին, երբ Երվանդունիների օրոք Արմավիրը ստանձնում է իր առաջատար դերը։ Հնարավոր է նաև, որ Արմավիրի հունարեն արձանագրություններում վկայված տաճարա-քաղաքացիական համայնքը, որը գոյատևել է հելլենիստական ժամանակաշրջանում, սկզբնավորվել է ավելի վաղ, աքեմենյանների տիրապետության օրոք։ Բացառված չէ, որ գրավոր աղբյուրները աղոտ հիշողություններ են պահպանել այս ժամանակաշրջանի մասին։ Հայ ժողովրդի ծագումը և Հայկական լեռնաշխարհով մեկ նրա տարածումը անդրապատկեղող Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի առաջին տասը գլուխները, կապված Արմավիրի հիմնադիր Ալամայիսի, Հարմայի, Անուշավան Սոսանվերի և մյուսների հետ, պետք է որ վերաբերեն Ուրարտուից Սր-

[13] Б. Н. Аракелян, նշվ. աշխ., էջ 166—168։

վանդունիներին անցման, վերջիններիս Արմավիրում հաստատվելու ժամանակաշրջանին։

Մ. թ. ա. 331 թ. աշնանը Ասորիստանում, Գավգամելայի մոտ Ալեքսանդր Մակեդոնացին փայլուն հաղթանակ տարավ, որի հետևանքով աքեմենյան աշխարհակալ տերությունը կործանվեց։ Օգտվելով ստեղծված իրադրությունից, Հայաստանի կառավարիչ Երվանդը, որը մասնակցում էր ճակատամարտին, ռազմի դաշտից դուրս բերեց իր զորքը և վերադառնալով Հայաստան իրեն անկախ հայտարարեց։ Իր պետության համար որպես նրստավայր-մայրաքաղաք նա ընտրեց Արմավիրը։ Ընտրությունը ճիշտ էր կատարված։ Արարատյան բարեբեր դաշտը նորաստեղծ պետության տնտեսական կենտրոնն էր, իր զարգացած երկրագործությամբ, որը հաջողությամբ մրցում էր հարևան նախալեռնային և լեռնային շրջաններում ծաղկող անասնապահության հետ։ Այստեղ, այս դաշտում էին խաչաձևվում դեռևս հնուց հայտնի առևտրական ուղիները, որոնք հարավը կապում էին հյուսիսի հետ, արևելքը՝ արևմուտքի։ Արմավիր բլուրի ստրատեգիական բացառիկ նշանակությունը՝ պայմանավորված նրա գերիշխող դիրքով և լայն տեսադաշտով, պաշտպանողական առավելություններն ընդգծող դժվարամատչելի լանջերը, ստորոտով հոսող Արաքս գետը, որն ապահովում էր ոռոգման և խմելու ջրով, այն դարձրին հարմար միջնաբերդ նոր մայրաքաղաքի համար, մանավանդ որ ուրարտական ժամանակաշրջանի պարիսպները դեռ կանգուն էին, իսկ ուրարտական շենքերը՝ դեռ պիտանի։ Միջնաբերդի մուտքի շրջակայքում պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով բլրի հյուսիս-արևմտյան լանջին Երվանդունիները նոր աշտարակ կառուցեցին[14]։ Սրա բնորոշ կողմն այն է, որ քարերը իրար միացած էին երկաթե կամ փայտե հատուկ ամրակներով, որոնց ծիծեռնակի պոչի ձևը հիշեցնող բները լավ երևում են։ Նման ձևի բներով քարերի առկայությունը բլրի գագաթին տեղադրված տաճարային շենքում վկայում է այստեղ կատարված վերակառուցման աշխատանքների մասին։ Ուրարտական պաշտամունքային շենքի օգտագործումը հելլենիստական ժամանակաշրջանում, թեկուզև որոշ վերափոխություններից հետո, հաստատում է վաղուց արտահայտված տեսակետը հինհայկական ձևավորվող ճարտարապետության վրա ուրարտական ճարտարապետության թողած ազդեցության մասին։ Վերակառուցման հետքեր են երևում ամրոցի արևելյան մասում տեղադրված ուրարտական պալատական շենքերում, արևմտյան պարսպին դրսից հարող սենյակներում և այլ տեղերում, որոնք հարմարեցվել են Երվանդունիների և իրենց շրջապատի պետքերի համար։ Հելլենիստական ժամանակաշրջանում է կառուցապատվել ամրոցի արևմտյան մասը, ուրարտական երկու պարիսպների միջև ընկած տարածքը։ Այն ինտենսիվ կերպով է բնակեցվել հելլենիստական ժամանակաշրջանում, որի մասին են վկայում բազմաթիվ կացարանների մնացորդները։ Վերջիններիս շերտագրական պատկերը ցույց է տալիս, որ նրանք անտարակույս ետուրարտական՝ հելլենիստական ժամանակաշրջանին են պատկանում։ Կացարաններն ունեն պարզ հատակագծեր. նրանց հիմքերի մակարդակների միջև նկատվող տարբերությունները և այլ առանձնահատկություններ վկայում են շինարարական տարբեր, բայց մ. թ. ա. III—I դդ.

---

14 Б. П. Аракелян, նշվ. աշխ., էջ 163։

սահմաններում տեղադրվող փուլերի գոյության մասին։ Դատելով կացարանների համեստ բնույթից, կարելի է ենթադրել, որ միջնաբերդի ծայրամասում տեղադրված է եղել ոչ այնքան ունևոր բնակիչների մի թաղամաս։

Արդեն այսօր մատենագրական, վիմագրական և հնագիտական տվյալների համադրությունից ուրվագծվում է հինհայկական քաղաքն իր բազմազան, բայց ինքնատիպ գծերով, որպես գյուղատնտեսության, արհեստների ու առևտրի, երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի կարևոր կենտրոն։ Խեցեղենը աչքի է ընկնում ձևերի հարստությամբ, ինչպես նաև գունազարդ ու ջնարակած օրինակներով[15]։ Արմավիրի գունազարդ խեցեղենի հավաքածուն բացառիկ նշանակություն ունի հին Հայաստանի հելլենիստական դարաշրջանի մշակույթի ուսումնասիրման համար։ Խեցեղենի առատությունը, տիպաբանական ակնհայտ կապը Հայկական լեռնաշխարհի նախորդ ժամանակաշրջանների խեցեգործության հետ, տեղական խեցեղենի կավի ընդհանրությունը, բայց տարբերությունը բերովի իրերի կավից, թույլ են տալիս Արմավիրում տեսնելու Հայաստանի հելլենիստական դարաշրջանի խեցեգործության վաղ կենտրոններից մեկը, որի ազդեցությունը զգացվել է Հայաստանի հելլենիստական մյուս քաղաքներում։

Նույնը կարելի է ասել նաև մետաղագործության մասին։ Աշխատանքային գործիքների, զարդեղենի, զենքերի բազմազանությունը ակնարկում է, որ մետաղամշակման գործը կազմակերպված է եղել տեղում[15]։ Այդ են վկայում նաև ամրոցի արևմտյան մասում գտնված դարբնոցի մնացորդները։

Պեղումների ժամանակ գտնված գունազարդ խեցեղենը, կավե արձանիկները և այլ նյութերը խոսում են բնակիչների գեղարվեստական պատկերացումների և հավատալիքների մասին։ Ինչպես ամեն մի քաղաք, հելլենիստական դարաշրջանի քաղաքները չի կարելի պատկերացնել առանց փոխանակային կապերի։ Պեղումների ընթացքում ստացվեցին դեռևս ոչ հարուստ, բայց բնորոշ իրեղեն ապացույցներ այդ մասին։ Որպես կանոն դրանք անուշահոտ յուղեր ու օծանելիքներ փոխադրելու կավե փոքրիկ անոթներ են, սրվակներ, ամֆորիսկներ, տուփեր, որոնք պետք է որ արտադրված լինեն Փոքր Ասիայում և այնտեղից հասցված Արմավիր։ Հատուկ ուշադրության արժանի են Արմավիրում ու նրա շրջակայքում գտնված դրամները, մեկը Հոռոդոսյան (մ. թ. ա. IV—III դդ.)[17], մյուսը մակեդոնական՝ Ֆիլիպ I-ի (մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսի սկիզբ)։

---

15 Б. Н. Аракелян, նշվ. աշխ.։ Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3։ Նույնի՝ Древнеармянская керамика из раскопок Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1։ Ի. Ա. Կարապետյան, Մ. թ. ա. VI—III դարերի վաղհայկական թասերի մի խումբ, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3։ Նույնի՝ Արմավիրի խեցեգործության մի նոր տարատեսակ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 4։ Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի մ. թ. ա. VII—I դարերի խեցեղենի բնորոշ մի ձև, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2։

16 Б. Н. Аракелян, նշվ. աշխ., էջ 166, 171—172։ Վ. Կ. Զինջիրջյան, Հայաստանի անտիկ դարաշրջանի երկաթյա գյուղատնտեսական գործիքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1։

17 Х. А. Мушегян, Денежное обращение в античной и средневековой Армении по нумизматическим данным (автореферат докторской дисс.), Ереван, 1975, էջ 11. М. О. Зардарян, Амфоры из раскопок Арташата, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 271։

Արմավիրի միջնաբերդի և քաղաքային թաղամասերի զուգահեռ հետազոտությունը անշուշտ նպաստում է հուշարձանի ճիշտ ըմբռնմանը։ Այս ուղղությամբ տարվող աշխատանքները, հատկապես վերջին տարիներին, տվել են որոշակի արդյունքներ[18]։ Այժմ կարելի է վստահությամբ ասել, որ քաղաքը ձգվում էր միջնաբերդից դեպի արևմուտք՝ զբաղեցնելով շուրջ 100 հեկտար տարածություն։ Նրա սահմաններն էին. Արաքսի հին հունը՝ հարավից, նոր Արմավիրի բլրաշարքերը՝ արևմուտքից, այժմյան Բամբակաշատ գյուղի հողային տարածությունները՝ հյուսիսից։ Քաղաքային այս տարածքը հետախուզական պեղումների եղանակով ուսումնասիրվել է բազմիցս[19]։ Բայց շատ ավելի խոսուն են այն նյութերը, որոնք գտնվել են սիստեմատիկ պեղումների ընթացքում, քաղաքի արևմտյան ծայրամասում[20]։

Նոր Արմավիրի բլրաշարքի արևելյան կողմում բացվող համալիրի մնացորդները հավանաբար վերաբերում են հելլենիստական դարաշրջանի ագրակին։ Այն բաղկացած է բնակելի ու տնտեսական բաժանմունքներից՝ խմբված ներքին բակի շուրջը։ Բնակելի մասի սենյակները ջեռուցվում էին բուխարիների օգնությամբ, որոնք իրենց զուգահեռներն ունեն հելլենիստական քաղաքներում։ Տնտեսական մասը աչքի է ընկնում իր հնձաններով։ Նրանցից մեկն ունի խաղողի տրորման սվաղապատ հրապարակ՝ համեմատաբար մեծ քանակի հումք մշակելու կարողությամբ։ Մյուս հնձանը բաղկացած է խաղողը ճզմելու քարե սալից և խաղողի հյութը կուտակող քարե գուռից։ Հայտնաբերված հնագիտական նյութերը, այդ թվում և միջնաբերդից, կասկած չեն թողնում, որ Արմավիրի բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը երկրագործությունն է եղել։ Այդ մասին են խոսում գյուղատնտեսական և հաց թխելու արարողության հետ կապված գործիքները, քարե աղորիքները և, ի վերջո, այրված ցորենի մնացորդները։

Արմավիրում վաղ միջնադարում կյանքը նվազելու մասին գրավոր աղբյուրների վկայություններն իրենց հաստատումը գտան հնագիտական պեղումների տվյալներում։ Իրավիճակը փոխվում է ավելի ուշ արաբական տիրապետությանը հաջորդող ժամանակաշրջանում։

Միջնադարյան բնակավայրի առաջին հետքերը երևացել էին դեռևս Երիցյանի և Ուվարովի պեղումների ժամանակ։ Բնակավայրը ավելի որոշակիորեն ուրվագծվեց վերջին տարիներին։ Դժվարամատչելի բլուրը և նրա վրա տեղադրված ամրոցը, թեկուզև կիսաքանդ պարիսպներով ու ավերված շինություններով, չէին կարող իրենց վրա չհրավիրել շրջապատի ուշադրությունը։ Բլրի նոր բնակիչների շինարարական գործունեությունը ծավալվեց նրա արևմտյան լանջին ու գագաթին, որտեղ վերևի շերտերում երևան եկան միջնադարյան կացարանների բավականին անկանոն շարված հիմնապատեր, որոնց ավերիչ գործունեությունը ուրարտական և հելլենիստական շերտերի համար ակնհայտ է։

Ավելի կանոնավոր հատակագծով մի փոքր կառույցի հետքեր բացվեցին գագաթից քիչ դեպի արևելք։ Այն ուղղված է արևելքից արևմուտք և ներսում

18 Г. А. Тирацян, Города Армении эллинистического времени в свете археологических исследований, «Вестник древней истории», 1979, № 2.

19 Б. Н. Аракелян, Նշվ. աշխ., էջ 162։

20 Գ. Ա. Տիրացյան, Ի. Ա. Կարապետյան, Նշվ. աշխ., էջ 251—255։

երկու կողմից ունի ցածր քարաշեն նստարաններ։ Կառույցի հիմնապատերում հանդիպում են ուրարտական և հելլենիստական ժամանակաշրջանի մշակված քարեր։ Բնակության հետքեր են երևում նաև արևելյան լանջին տեղադրված ուրարտական պալատական շենքերում, որոնք արդեն մի անգամ՝ հելլենիստական դարաշրջանում, օգտագործվել էին նման նպատակներով։

Արմավիրի միջնադարյան բնակավայրի պատմության համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գագաթի քարաշեն շենքը՝ ուրարտական և հելլենիստական ժամանակաշրջանի տաճարը, հիմնովին վերակառուցված միջին դարերում։ Ըստ նորագույն ենթադրությունների (Ս. Վ. Հարությունյան), ուղղանկյան ելուստներով օժտված այս շենքը միջնադարում ծառայել է որպես ամրոց-ապաստանավայր բլրի բնակչության համար։

Հիշատակության արժանի են, ի վերջո, միջնադարյան հնձանները, մեկը բլրի գագաթին, մյուսը՝ ամրոցի հյուսիս-արևելյան անկյունից ոչ հեռու։ Բնակիչների կենցաղն ու զբաղմունքը բնութագրող նյութական մշակույթի առարկաներն ու իրերը բնորոշ են զարգացած միջնադարի համար և իրենց զուգահեռներն ունեն այդ ժամանակաշրջանի մյուս բնակավայրերում։ Գինու հաստափոր, գոտեզարդ ու դրոշմազարդ կարասների բեկորները հայտնի են Անիի ու Դվինի պեղումներից և թվագրվում են XI—XIII դդ.։

Զևերի բազմազանություն է հանդես բերում բնակիչների առօրյայի հետ կապված ջնարակած ու հասարակ խեցեղենը։ Ուշադրության արժանի են մետաղե իրերը (երկաթից պատրաստված աշխատանքային գործիքներն ու զենքերը, բրոնզե զարգեղենը), ապակե ապարանջանները և այլն։

Բնակավայրի թվագրման համար խիստ կարևոր են Արմավիրում գտնված միջնադարյան դրամները՝ բյուզանդական ու սելջուկյան. դրանք թվագրվում են X—XI և XII—XIII դդ., հավանաբար ուրվագծելով բնակավայրի գոյատևման ժամանակագրական սահմանները։ Բնակավայրի առաջացումը պատահական չպետք է համարել։ IX—X դդ. սկսած, հայկական պետականության վերականգնումից հետո, Բագրատունիների օրոք, երկրում ավելի ապահով պայմաններ ստեղծվեցին։ Ժողովուրդը կամ նրա մի մասը, որը մինչ այդ քաշվել էր նախալեռնային կամ լեռնային ավելի ապահով վայրերը, այժմ հնարավոր համարեց իջնել դաշտ՝ աստիճանաբար վերաբնակեցնելով քիչ թե շատ ապահով բլուրները։ Վերաբնակեցման հետքեր, հնագիտորեն հավաստված, լավ երևում են Արարատյան դաշտի մի շարք բարձունքներում՝ Կարմիր բլուրում, Մեծամորում, Դավթի բլուրում, Արմավիրում, որտեղ կյանքը դադարել էր, բայց այժմ վերականգնվում էր համեստ բնակավայրերի ձևով, որոնք անշուշտ վկայում են երկրում, առաջին հերթին՝ հարթավայրերում ստեղծված նոր իրադրության մասին։

Արմավիրի ուսումնասիրման հեռանկարները կապված են, անկասկած, նրա հելլենիստական ժամանակաշրջանի՝ հին հայկական մշակույթի բաղմակողմանի բացահայտման խնդիրների հետ։ Որպես հինհայկական հասարակության մի կարևոր օղակ Արմավիր քաղաքը կոչված է պարզելու երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության հանգուցային հարցերը։ Արմավիրի հնագիտական ուսումնասիրման հեռանկարները բխում են նաև հուշարձանի ընդգրկման աստիճանից, միջնաբերդ-քաղաք-դամբարանադաշտ համակարգի միաժամանակյա ուսումնասիրության իրողությունից։ Դիտենք

հուշարձանի բաղադրատարրերը առանձին-առանձին, նրանց հեռանկարների տեսակետից։

Միջնաբերդում պետք է շարունակվի նրա դագաթին տեղադրված շենքի ուսումնասիրումը, ավարտվեն այսպես կոչված մերձտաճարային համալիրի, ինչպես նաև արևմտյան լանջի մնացած, մինչև օրս չուսումնասիրված տարածքի պեղումները։

Ուշադրության արժանի են բլրի ստորոտները, հատկապես հարավայինը, որտեղ գտնվել են հունարեն արձանագրությունները և որտեղ, ըստ ոմանց, գտնվում էր գուշակություններին ծառայող սոսիների պուրակը։

Մեծ սպասելիքների հետ են կապված բուն քաղաքի՝ միջնաբերդից դեպի արևմուտք տարածվող քաղաքային թաղամասերի պեղումները։ Այստեղ հնագետները բավական աննպաստ վիճակում են գտնվում, քանի որ քաղաքի տարածքը զբաղեցված է մշակովի հողամասերով։ Փորձնական, թեկուզև սահմանափակ բնույթի պեղումները այստեղ, ինչպես նաև Արաքսի հին հունի հարևանությամբ, կարող են այնուամենայնիվ որոշ պարզություն մտցնել քաղաքի պրոբլեմի մեջ։ Այս տեսակետից ուղղակի հրամայական է քաղաքի արևմտյան ծայրամասի՝ այսպես կոչված ագարակի ինտենսիվ հետազոտումը, որը, ինչպես տեսանք, տվել է առաջին հուսադրող արդյունքները։

Առաջին քայլերն են արված քաղաքային էկոնոմիկայի ուսումնասիրման ուղղությամբ՝ կապված երկրագործության (առավելապես խաղողագործության), արհեստների (խեցեգործության ու մետաղամշակման) զարգացման հետ. նոր նյութերը կնպաստեն պարզելու քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը։

Եթե միջնաբերդի կողքին ունենք ուսումնասիրվող քաղաքը, թեկուզև նրա փոքր մասը, ապա համարյա ոչինչ չգիտենք Հին Արմավիրի դամբարանադաշտի մասին։ Երիցյանի և Ուվարովի պեղումներից երևաց, որ դամբարաններ, ճիշտ է տարբեր ժամանակների, բացվել են բլրի ստորոտներում։ Դամբարանային նյութ, այն էլ հելլենիստական ժամանակաշրջանի, պետք է համարել Ս. Տեր-Հակոբյանի հրատարակած իրերը՝ ոսկե մեդալիոնները, գունազարդ անոթը, բազմանիստ կնիքը։ Վերջին տարիների պեղումները ցույց տվեցին, որ բլրի արևելյան լանջն ու ստորոտը զբաղեցված են եղել երկաթի դարի դամբարաններով։ Հռոմեական ժամանակաշրջանի դամբարան (դրամով և ապակե սրվակով) գտնվեց շինարարական աշխատանքների ժամանակ, բլուրներից հյուսիս, Ջրաշեն գյուղի գոմերի տարածքում։ Հելլենիստական ժամանակաշրջանի դամբարաններ են բացվել քաղաքի արևմտյան ծայրամասում և ուրարտական քաղաքի ավերակներում։ Մնում է գտնել քաղաքի բուն դամբարանադաշտը, Երվանդունիների տոհմական հանգստարանը։ Նրա հայտնաբերումն ու ուսումնասիրումը պետք է ամբողջացնի հին Հայաստանի պաշտամունքային պատկերացումների, թաղման ծեսերի, ի վերջո՝ մշակույթի բնույթի մասին մեր առ այսօր գոյություն ունեցող գիտելիքները։

РАСКОПКИ АРМАВИРА

(К 100-летию первых раскопок)

Кандидат историч. наук Г. А. ТИРАЦЯН

(Резюме)

Раскопки на Армавирском холме, произведенные в мае 1880 г. А. Д. Ерицовым и в октябре того же года А. С. Уваровым, несмотря на их скромный характер, заметно усилили интерес исследователей к древнему Армавиру. Последующее изучение Армавира ограничивалось, как правило, обследованием поверхности холма или работами разведочного характера, ознаменовавшимися важным открытием греческих надписей. Основой для всестороннего изучения памятника стали систематические раскопки, начатые Институтом археологии и этнографии АН АрмССР. В статье рассматриваются основные результаты раскопок Армавира и намечаются перспективы его дальнейшего изучения.